# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՂՐԻԲԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1996-2002 ԹԹ.)

ԺԱՄՀԱՐՅԱՆ Ա. Ռ.

*Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները 1996-2002 թթ. ընթացքում ոչ միայն ունեցել են երկկողմ հարաբերություններ, այլև ձգտել են իրենց հարաբերությունները կառուցել նաև միջազգային տարբեր կառույցների շրջանակներում, ինչը նույնպես նպաստել է երկու կողմերի հարաբերությունների սերտացմանը: Բացի այս, երկու կողմերի փոխհարաբերությունների վրա զգալի ազդեցություն է թողել նաև գերտերությունների, եվրոպական մեծ պետությունների վարած քաղաքականությունը միջազգային ասպարեզում և տարածաշրջանում: Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների փոխհարաբերությունների վրա առանձին-առանձին հսկայական ազդեցություն են ունեցել համագործակցությունը տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպես նաև փոխհարաբերությունները հարևան ու տարածաշրջանային պետությունների հետ, քրդական, ջրի հիմնախնդիրները և այլն: Ուստի Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների միջև փոխհարաբերությունները դիտարկելու համար շատ կարևոր է, բացի երկկողմ ուղղակի հարաբերություններից, քննել նաև այս հարաբերությունները միջազգային զարգացումների համատեքստում: Սա թույլ է տալիս ավելի ամբողջական կերպով ընկալել Թուրքիա-Մաղրիբի արաբական երկրներ հարաբերությունները և, միաժամանակ, տարածաշրջանային ու գլոբալ զարգացումների ազդեցությունը այդ հարաբերությունների վրա: Պետք է նշել, որ հարաբերությունները տարածաշրջանային և գլոբալ զարգացումների շրջանակում, որում ընդգրկված են եղել Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները կամ երկրներից մի քանիսը, ինչպես զարգացրել են երկկողմ հարաբերությունները և նպաստել դրանց ավելի սերտացմանն ու ամրապնդմանը, այնպես էլ հակամարտություններ են առաջացրել Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրներից մեկի կամ մի քանիսի հարաբերություններում:*

*Մասնավորապես, Պարսից ծոցի պատերազմից հետո, երբ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը Իրաքին արգելեց թռիչքներ կատա- ռել 36-րդ զուգահեռականից հյուսիս, այս տարածքները սկսեցին պաշտպանվել Թուրքիայում տեղակայված ամերիկյան կոալիցիոն օդային ուժերի կողմից, որոնք Սադամ Հուսեյնի ինքնաթիռներին թույլ չէին տալիս անցնել 36-րդ զուգահեռականը, ինչպես նաև այստեղից հարձակումներ էին կատարում Իրաքի ռազմական օբյեկտների վրա: 1996 թ. այս ուժերը օդային դիպուկ հարվածներ հասցրին Իրաքի բազմաթիվ ռազմական օբյեկտներին, մանավանդ այն բանից հետո, երբ Իրաքը փորձեց միջամտել Իրաքյան Քրդիստանի տարբեր*

*հակադիր ուժերի միջև ստեղծված հակամարտությանը[1]: Այս ամենը առաջացնում էր Լիբիայի դժգոհությունը, և Լիբիայի վարչապետ Աբդ ալ Մաջիդ Կա'ուդը 1996 թ. հոկտեմբերի 4-6-ին, Էրբաքանի կատարած այցի ժամանակ, Թուրքիային մեղադրեց Իրաքի դեմ օդային հարձակումների ընթացքում Ամերիկայի հետ համագործակցելու մեջ՝ հայտարարելով. «Որևէ երկիր չպետք է թողնի օտարերկրյա ինքնաթիռներին իր օդային տարածքը օգտագործելու այլ երկրի վրա հարձակումներ կազմակերպելու համար»[2]: Իսկ երբ 1997 թ. Թուրքիան մեկ ամսով ներխուժեց Հյուսիսային Իրաք, Մուամար Կադաֆին սպառնաց, որ կարտաքսի այն թուրքերին, որոնք Լիբիայում բիզնես ունեն, ինչպես նաև քննադատեց Թուրքիային Իսրայելի հետ համագործակցության համար[3]: Կադաֆին նաև հայտարարեց, թե թուրքական բանակը ղեկավարում են հրեաները: Դրա հետևանքով Թուրքիան նույն թվականի հոկտեմբերին Լիբիայից հետ կանչեց իր դեսպանին՝ հայտարարելով, որ ցանկանում է Մուամար Կադաֆիի արտաքսումը, և որ լիբիացի ժողովուրդը պետք է նրան փոխարինի մեկ այլ առաջնորդով, որը կարող է միջազգային հանրության հետ կառուցել լավ հարաբերություններ[4]: Մեկ տարի անց՝ 1997 թ., Թուրքիան և Իսրայելը հայտարարեցին, որ ԱՄՆ-ի հետ նոյեմբերին պատրաստվում են համատեղ ծովային զորավարժություններ կատարել: Սա դատապարտվեց Լիբիայի կողմից, որը մի շարք այլ արաբական երկրների նման կարծում էր, որ այդ զորավարժությունները բոլոր արաբական երկրների, իսկ ավելի ստույգ՝ Սիրիայի և Իրաքի անվտանգության համար վտանգ են ներկայացնում[5]: Իսկ երբ 1998 թ. Քրդական բանվորական կուսակցություն (ՔԲԿ) պատճառով խիստ սրվել էին Սիրիայի և Թուրքիայի հարաբերությունները, և թուրքական ներխուժման վտանգ կար Սիրիայի համար[6], Մուամար Կադաֆին հայտարարեց, որ Սիրիայի դեմ ցանկացած ոտնձգություն կհամարվի ոտնձգություն նաև Լիբիայի դեմ: Լիբիայի առաջնորդը նաև զգուշացրեց, որ Թուրքիայի ոտնձգությունը Սիրիայի դեմ կսպառնա թուրքական բիզնեսի շահերին Լիբիայում[7]: Թուրքիա-Սիրիա հարաբերությունների լարվածությունը ոչ միայն Լիբիային ստիպեց հանդես գալ Սիրիային աջակցող դիրքերից: Մասնավորապես, Մաղրիբի արաբական երկրներից Մարոկկոն 1998 թ. հոկտեմբերին հայտարարեց, որ ինքը չեղյալ է հայտարարում Թուրքիայի*

---

[1] **Հովհաննիսյան Ն.**, *Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, հ. 3, Ե., 2006, էջ 545:*

[2] ***Turkey, Libya To Triple Trade _ With One Big Condition, Yalman Onaran, Oct. 5, 1996*** *(http://www.apnewsarchive.com/1996/Turkey-Libya-To-Triple-Trade-With-One-Big-Condition/id-f577c9bb41f4bd7eac779fec78bb94dc )*

[3] *Libya: News and Views, July 1997 ( http://www.libyanet.com/7-97nwsc.htm )*

[4] *Libya: News and Views, June 1997 (http://www.libyanet.com/6-97nwsc.htm )*

[5] *Libya willing to hand Lockerbie suspects to independent Scotland, 9/9/1997, http://www.-arabicnews.com/ansub/Daily/Day/970909/1997090937.html )*

[6] **Շաքարյան Ա.**, *Արարատից այն կողմ. ապակողմավորելով Թուրքիան, Ե., 2011, էջ 72:*

[7] *Edward Graham, Terrorism and Borders (http://www.mideastinfo.com/archive/paper1.htm)*

*վարչապետ Ահմեդ Մասուդ Յըլմազի՝ նախապես ծրագրված այցելությունը Մարոկկո[8]: Մարոկկոյի կառավարությունը ընդգծեց, որ թուրքական կողմին տեղեկացրել է Մասուդ Յըլմազի այցելության անհնարինության մասին այն ժամանակ, երբ Թուրքիա-Սիրիա լարված հարաբերությունները մոտ են երկու հարևան երկրների միջև պատերազմի վերածվելու: Այնուամենայնիվ, տարածաշրջանային այսպիսի զարգացումների պատճառով Թուրքիայի և Մաղրիբի արաբական եր-կրների միջև հարաբերությունների վատացումը ժամանակավոր բնույթ էր կրում, միայն քաղաքական ենթատեքստ ուներ և սո-վորաբար չէր ազդում համագործակցության այլ ոլորտների վրա (տնտեսական, մշակութային):*

*Տարածաշրջանում 2000 թ. սկսած՝ Ինթիֆադայի երկրորդ փուլը[9] և դրան հաջորդած զարգացումները ազդեցություն են թողել վերոհիշյալ հարաբերությունների վրա: Այսպես՝ 2001 թ. մայիսի 24-ին, Մարոկկո կատարած այցելության ժամանակ Թուրքիայի խորհրդարանի պատվիրակության անդամները Մարոկկոյի խորհրդարանի պալատի խոսնակ Աբդ ալ Վահեդ Ռադիի հետ հանդիպումներ են ունենում, որոնց ընթացքում քննարկվում է նաև երկու երկրների դերը իսլամական աշխարհում, միջերկրական և մերձավորարևելյան տարածաշրջաններում: Սրա վերաբերյալ Ռադին հույս է հայտնում, որ Թուրքիան միջոցներ ձեռք կառնի պաղեստի-նա-իսրայելական կոնֆլիկտում կրակի դադարեցման, արաբա-իսրայելական հակամարտությունում տնական կարգավորման ուղղությամբ՝ պաղես-տինցիներին հնարավորություն տալով ստեղծել իրենց սեփական պետությունը՝ Երուսաղեմ մայրաքաղաքով[10]: Հիշեցնելով, որ թագավոր Մուհամմադ VI-ը Իսլամական համագործակցության կազմակերպության Երուսաղեմի կոմիտեի նախագահն է, Աբդ ալ Վահեդ Ռադին նշում է, որ այս խնդիրը առանցքային նշանակություն ունի Մարոկկոյի համար, և Մարոկկոն ցանկանում է, որ Թուրքիան Երուսաղեմի պաշտպանության գործում լինի հիմնական դերակատարներից մեկը: Ի պատասխան՝ Թուրքիայի պատվիրակության ղեկավարը անընդունելի է համարում Իսրայելի*

---

[8] *During the Syrian-Turkish crisis; Morocco refused to receive Yilmaz, 11/25/1998 (http://-www.arabicnews.com/ansub/Daily/Day/981125/1998112527.html )*

[9] *«Ինթիֆադա» արաբերեն նշանակում է ցնցում, դողդրոցք: Այսպես են անվանվել պաղեստինցիների ընդվզման երկու փուլերն ընդդեմ Իսրայելի, որոնք բռնկվել են 1987 և 2000 թթ.:*

[10] *2000 թ. սեպտեմբերի 28-ին Լիկուդ խմբավորման նախագահ, գեներալ Արիել Շարոնը այցելել էր Երուսաղեմի ժայռատաճարի բլուր, որտեղ գտնվում է մուսուլմանների ամենահայտնի սրբազան կենտրոններից մեկը՝ հանրահայտ ալ-Աքսա մզկիթը, որից հետո Պաղեստինի արաբները, Շարոնի այս քայլը համարելով ծանր վիրավորանք իսլամի նկատմամբ, զինված պայքար սկսեցին Իսրայելի դեմ: Այսպես սկսվեց Ինթիֆադայի երկրորդ փուլը: Իսրայելը, իր հեր-թին, շատ խիստ և կոշտ քայլերի դիմեց՝ ճնշելու Ինթիֆադան: Դրությունն էլ ավելի լարվեց 2001 թ. փետրվարի 6-ի խորհրդարանական ընտրություններում Լիկուդի հաղթանակից հետո, ինչը Շարոնին հնարավորություն տվեց դառնալ վարչապետ: Այս մասին մանրամասն տե՛ս* **Հովհաննիսյան Ն.**, *նշվ. աշխ., հ. 4, Ե., 2007, էջ 323:*

*ոտնձգությունները Պաղեստինի ժողովրդի դեմ՝ խոստանալով, որ իր երկիրը միշտ կմնա իր օրինական իրավունքները վերականգնելու համար պայքարող պաղեստինցի ժողովուրդի կողքին: 2002 թ. հունիսի 3-ին Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Օմեր Իզգինը Թունիս այցելության ժամանակ հանդիպում է Զին ալ-Աբդին Բին Ալիի հետ, որից հետո տեղեկացնում է, որ Թունիսի նախագահը Թուրքիային խնդրել է կարգավո-րել պաղեստինա-իսրայելական հակամարտությունը՝ օգտագործելով ԱՄՆ-ի և Իսրայելի հետ իր սերտ կապերը: Խոսնակը նշեց, որ Թունիսը համակրում է Յասիր Արաֆաթին, կապեր ունի նրա հետ և գտնում է, որ պաղեստինցիների նկատմամբ պետական մակարդակով իրականացվող ահաբեկչությանը պետք է վերջ դրվի: Ընդգծելով, որ ինքը Թունիսի նախագահի հետ քննարկել է նաև Իրաքի հարցը՝ Օմեր Իզգինը հայտնում է, որ Բին Ալին ընդունում է նաև Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման տեսակետը[11]:*

*Այդ ժամանակ քննարկվում էին նաև Թուրքիայի կողմից արաբական երկրներին ջուր վաճառելու ծրագրերը: Հայտնի է, որ Թուրքիան դեռևս 2000-ական թթ. հույս ուներ ոչ շշալցված վիճակում ջուր վաճառել Իսրայելին, Հորդանանին[12], ինչպես նաև Պարսից ծոցի արաբական երկրներին: 1996-2002 թթ. ընթացքում Թուրքիան ծրագրեր ուներ ոչ շշալցված վիճակում ջուր վաճառել Մաղրիբի արաբական երկրներից Լիբիային, Ալժիրին և Թունիսին [13]: Չնայած որ Թուրքիայի այդ ծրագրերից իրականություն դարձավ միայն Իսրայելին և Հորդանանին ջուր մատակարարելու մասը, ինչպես նաև շատ ավելի ուշ Թուրքիան ձեռնամուխ եղավ Կիպրոսի թուրքական հանրապետությանը ջուր մատակարարող ջրատարի կառուցմանը, այնուամենայնիվ, այսքանն էլ վկայում է, որ Թուրքիայի՝ Մաղրիբի արաբական երկրներին ջուր մատակարարելու՝ 1996-2002 թթ. ունեցած ծրագրերը անիրականանալի չէին: Այդ ծրագրերի վկայությունն են նաև բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները: Այսպես՝ 2002 թ. փետրվարի 8-ին Թուրքիայի արտգործնախարար Իսմայել Ջեմը Լիբիայի իր գործընկեր Աբդուլռահման Շալկամի հետ Անկարայում համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց, որ Թուրքիան մտադիր է Իսրայելից հետո Մանավգաթ գետի ջուրը վաճառել նաև Լիբիային: Ընդ որում, նա նշեց, որ Մանավգաթ գետի ջուրը Լիբիային վաճառելը ոչ այնքան տնտեսական, որքան խորհրդանշական հարց է: Եվս մեկ չիրականացված նախագիծ կարելի է համարել էլեկտրաէներգիայի ոլորտում համագործակցության միջոցով միասնական համակարգ ստեղծելու ծրագիրը, որի մասնակիցները պետք է դառնային Մաղրիբի արաբական երկրները, Եգիպտոսը, Միջերկրականի արևելյան երկրները և Թուրքիան: Նախատեսվում էր, որ էլեկտրական*

---

[11] *Tunisian President asks Turkey to handle Middle East problem, 4/6/2002, (http://www.hurriyetdailynews.com/tunisian-president-asks-turkey-to-handle-middle-east-problem.aspx?pageID=438&n=tunisian-president-asks-turkey-to-handle-middle-east-problem-2002-04-06 )*

[12] **Бояркина О.** *Анализ состояния международного рынка небутилированной воды (Электронный журнал "Местное устойчивое развитие", М., 2011, с. 7-8).*

[13] *Turkey to invest its waters among the Middle East states, 3/7/2000 (http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/000307/2000030717.html)*

միասնական համակարգը կանցնի Միջերկրական ծովի ափի արաբական երկրներով և կմիանա եվրոպական երկրների (մասնավորապես Իսպանիայի և Իտալիայի) էլեկտրական համակարգերին: Այսպիսի նախագծերի առկայության վկայությունն են այդ ժամանակվա տվյալ ոլորտների համար պատասխանատու պաշտոնյաների հայտարարությունները, ինչպես նաև դրանք իրականացնելու համար ձեռնարկված քայլերը: Մասնավորապես Արաբական տնտեսական և զարգացման ֆոնդի նախագահ Աբդել Լաթիվ ալ-Համադը հայտարարեց, որ այս ծրագիրը թույլ կտա Միջին Արևելքը, Հյուսիսային Աֆրիկան և Եվրոպան կապել իրար Թուրքիայի, Սիրիայի, Լիբիայի, Թունիսի, Մարոկկոյի, Ալժիրի, Իտալիայի և Իսպանիայի միջոցով: Վերջինս այս հայտարարությունը հնչեցրեց 2000 թ. մայիսի 17-ին, երբ Լիբանանը այս ծրագրի շրջանակում իր էլեկտրական գծերով տարածաշրջանի պետությունները կապելու համար Արաբական տնտեսական և զարգացման ֆոնդի հետ 26,6 միլիոն դոլարի վարկային պարտավորության պայմանագիր ստորագրեց[14]: Այնուամենայնիվ, այս ծրագիրը ևս իրականություն չդարձավ՝ տարածաշրջանի անկայուն լինելու պատճառով: Սակայն ծրագրի առանձին մասերի իրագործվելը, ինչպես նաև այդ ուղղությամբ կատարված քայլերը փաստում են, որ այս ծրագիրը նույնպես անիրականանալի չէր և հաջողության դեպքում կնպաստեր տարածաշրջանային համագործակցության միջոցով Թուրքիայի և Մաղրիբի արաբական երկրների հարաբերությունների սերտացմանը:

1996-2002 թթ., ինչպես և դրան նախորդող ժամանակահատվածում, Թուրքիան և Մաղրիբի արաբական երկրները համագործակցում էին միջազգային մի քանի կառույցների կազմում: Եվրոպա-միջերկրածովյան գործընկերության ստեղծումից մեկ տարի անց, նպատակ ունենալով միանալ այդ գործընկերության երկրների միջև նախատեսվող ազատ առևտրային գոտուն, Թուրքիան 1998 թ. բանակցություններ սկսեց Միջերկրականի մի շարք երկրների, այդ թվում նաև Մաղրիբի արաբական երկրներից Մարոկկոյի և Թունիսի, իսկ 2001 թ. վերջին՝ նաև Ալժիրի հետ[15]: Եգիպտոսի նախաձեռնությամբ մեկ այլ տարածաշրջանային կազմակերպության՝ Միջերկրածովյան ֆորումի ստեղծումից հետո ինչպես 1996-2002 թթ., այնպես էլ դրանից հետո այս կառույցի նիստերը շատ հաճախ տեղի էին ունենում ֆորումի անդամ, Մաղրիբի արաբական երկրների քաղաքներում, ինչպես նաև Թուրքիայում: Միջերկրածովյան ֆորումը բազմակողմ հանդիպումների շրջանակներում էլ ավելի նպաստեց Մաղրիբի երեք արաբական երկրների և Թուրքիայի կապերի ամրապնդմանը: Միջազգային կառույցների շրջանակներում հանդիպումների թվում կարևոր է նշել Միջերկրականի երկրների արտգործնախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ 1998 թ. ապրիլի 21-ին

[14] Arab Fund lends $26m to improve power grid, May 18, 2000 (http://www.dailystar.com.lb/News/Local-News/May/18/Arab-Fund-lends-$26m-toimprovepowergrid.ashx#ixzz29fhnXWPq)

[15] OECD Reviews of regulatory reform //Regulatory reform in Turkey, Paris, 2002, p.16.

*իսպանական Մայորկա կղզում տեղի ունեցած՝ Միջերկրականի երկրների 6-րդ համաժողովը: 11 երկրների թվում համաժողովին մասնակցել են Թուրքիայի պատվիրակությունը, ինչպես նաև Ալժիրի, Թունիսի և Մարոկկոյի պատվիրակությունները: Համաժողովն իր անհանգստությունն արտահայտեց Միջին Արևելքի խաղաղության գործընթացի սառեցման կապակցությամբ և պնդեց, որ Իսրայելն ընդունի պաղեստինյան տարածքներից աստիճանաբար հեռանալու՝ ԱՄՆ-ի առաջարկած ծրագիրը[16]: Որոշում ընդունվեց նաև ուժեղացնել երկրների միջև համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարում: Պետք է նշել, որ այդ ժամանակահատվածում համագործակցությունը միջազգային կառույցների կազմում նպաստում էր առավել սերտ ինտեգրվելուն: Բայց ի տարբերություն ավելի վաղ ժամանակահատվածի, երբ Թուրքիան, մի կողմից, Մաղրիբի արաբական երկրները, մյուս կողմից, դեռևս նոր էին միանում միջազգային տարբեր կառույցներին, արդեն 1996-2002 թթ. ընթացքում այս կառույցների շրջանակներում առկա տարածաշրջանի երկրների համագործակցությունը տարբեր հարցերում դրական երևույթ էր և նպաստում էր տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդմանը և այդ երկրների՝ միջազգային ասպարեզում միասնաբար հանդես գալուն:*

*Սիրիայի և Իրաքի հետ ջրային և քրդական խնդիրներում առկա լարվածությունը հաղթահարելու[17] համար Թուրքիան 1996-2002 թթ. փորձում էր առավելագույնս լավ հարաբերություններ ունենալ Մաղրիբի արաբական երկրների հետ, ինչը նրան կօգներ լուծելու իր առջև ծառացած խնդիրները Սիրիայի և Իրաքի հետ, ինչպես նաև ամրապնդել իր դիրքերը արաբական աշխարհում: 1996-2002 թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևափոխումների հետևանքով Թուրքիայի և Արաբական Մաղրիբի հարաբերությունները կարևոր դարձան Թուրքիայի համար նաև այլ տեսանկյունից: Բանն այն է, որ 1923-1998 թթ ընթացքում Թուրքիայի հարաբերությունները Աֆրիկայի հետ ցածր մակարդակի վրա էին: 1998 թ. Թուրքիայի կառավարությունը նոր ծրագիր ընդունեց, որով նախատեսվում էր ավելի գործուն լինել Աֆրիկայում՝ քաղաքական, տնտեսական մշակութային և այլ բնագավառներում: Սա էականորեն բարձրացրեց Թուրքիա-Մաղրիբի արաբական երկրներ հարաբերությունների կարևորությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, քանի որ Արաբական Մաղիբը այն տարածքն էր, որով Թուրքիան կարող էր ուժեղացնել իր ազդեցությունը Աֆ-*

---

[16] *Միջերկրականի երկրները պնդում են Իսրայելի հեռացումը, 21-04-1998, (http://nt.am/am/news/125022///?hayworld=)*

[17] *1996 թ. հունվարին Թուրքիայի արտաքին գործերի նախարարը Դամասկոսից պահանջեց դադարեցնել աջակցությունը ՔԲԿ-ին (տե՛ս* **Շաքարյան Ա.** *նշվ. աշխ., էջ 72): Հաջորդ երկու տարում երկրների միջև հարաբերությունները այնքան լարվեցին, որ 1998 թ. Սիրիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների սաստիկ լարվածության հետևանքով Դամասկոսն ստիպված եղավ վտարել ՔԲԿ-ի առաջնորդ Աբդուլա Օջալանին, սակայն սրանից հետո էլ՝ մինչև 2000 թ. հունիսը, մինչ Հաֆեզ Ասադի մահը, թուրք-սիրիական հարաբերությունները շարունակում էին մնալ սառեցված վիճակում (տե՛ս* **Կարապետյան Ռ.,** *Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 282):*

*րիկայում: 2001 թ. Լիբիան անգամ պատրաստակամություն հայտնեց աջակցել Թուրքային՝ մոտ ապագայում ստեղծվելիք Աֆրիկյան միությանը անդամակցելու հարցում: Այս ուղղությամբ Թուրքիա-Լիբիա համագործակցությունը արդյունավետ էր, ինչի ապացույցն է այն, որ Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆիի գործուն աջակցությամբ Աֆրիկյան միության ստեղծումից (9.VII.2002 թ.) հետո արդեն հաջորդ տարվա սկզբից Թուրքիան սկսեց մասնակցել միության նիստերին՝ որպես հյուր երկիր, իսկ երկու տարի անց նաև ձեռք բերեց դիտորդի կարգավիճակ*[18]*:*


**ОТНОШЕНИЯ ТУРЦИИ С АРАБСКИМИ СТРАНАМИ МАГРИБА В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНЫХ И ГЛОБАЛЬНЫХ РАЗВИТИЙ (1996-2002 ГГ.)**

**ЖАМГАРЯН А. Р.**

Резюме

Водные проблемы с Сирией и Ираком, а также нарастание напряженности в курдском вопросе способствовали сближению Турции с арабскими странами Магриба. К этому прибавлялось все более тесное сотрудничество Турции с Израилем, которое имело негативный резонанс во всем арабском мире. В силу сказанного, а также в целях сохранения влияния в арабском мире в 1996-2002 гг. Турция попыталась установить хорошие отношения с арабскими странами Магриба, что могло содействовать решению проблем с Сирией и Ираком, а также укреплению ее позиций на международной арене и в арабском мире.



**RELATIONS BETWEEN TURKEY AND THE ARAB MAGHREB UNION IN THE FRAMEWORK OF REGIONAL AND GLOBAL DEVELOPMENTS (1996-2002)**

**A. ZHAMHARYAN**

Abstract

The paper considers the relations between Turkey and the Arab Maghreb countries in the framework of regional and global developments in 1996-2002, as well as the goals that determine Turkey's close relations with the Arab Maghreb Union. The emergence of close relations between Turkey and the Arab Maghreb Union was due to the problems with Syria and Iraq, as well as the rising tension in Kurdish issues. Turkey's close co-operation with Israel that was negatively perceived in the Arabic world also contributed to this. Because of the mentioned problems and the wish not to lose its influence in the Arabic world, Turkey in 1996-2002 tried to form better relationships with the Arab Maghreb Union to secure its position in the international arena and the Arabic world.


[18] *(http://www.mfa.gov.tr/the-united-nations-organization-and-turkey_.en.mfa) Turkey and The African Union.*